# Զվարթության Trumpet's Sound վոր

50-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2019

# Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
# ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ես եմ հարությունն ու կյանքը.....Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Շրջանավարտ .....Հովիվ՝ Ռաֆֆի Զափարյան

Աստծուց առաջ անցնել.....Դոն Սթորմըր

Արդյոք կարելի՞ է.....Ռեքս Տիրլավ

Այցելուն.....Քաղված

Եկեղեցու պատմությունը (5) .....QMBC պանորամա

Ո՞վ է այս Հիսուսը .....Վեր. Հապիպ Ալաճաճի

Անձնական հարաբերությունների.....Դոկտ. Զեսլո Բասսարա

Այս անգամ էլ քեզ խնայեցի.....Քաղված

Հարությունը հնարավոր չէ կանգնեցնել .....Քաղված

Մարիամը՝ Հիսուսի հարության առաջին վկան .....Վեր. Հապիպ Ալաճաճի

Աստծո զորությունը.....Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Ճամփա կա, որ մարդուն շիտակ է թվում.....Քաղված

# Ես եմ հարությունն ու կյանքը

Հիսուսն ասաց նրան. «Ես եմ հարությունը և կյանքը. ով հավատում է Ինձ, թեև մեռնի, պիտի՛ ապրի: Եվ ով ապրում է և հավատում է Ինձ, երբեք պիտի չմեռնի: Դու հավատո՞ւմ ես սրան» (Հովհ. 11:25-26):

Տեր Հիսուսը աշխարհ եկավ՝ մարդկության փրկության համար Իր կյանքը տալու: Նա չարչարվեց, ծեծվեց, խաչվեց, մահացավ ու թաղվեց, բայց երրորդ օրը հարություն առավ:

«**ԵՍ ԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ**». Հիսուսը խոսում է մահից հետո եղած կյանքի՝ հավիտենական կյանքի մասին: Այո՛, գիտությունը շատ է փորձել ապացուցել այս կյանքի գոյությունը, փարավոնները հավատում էին հետմահու կյանքին, բայց չգիտեին՝ ինչպես ունենալ այն: Տեր Հիսուսը, երրորդ օրը հարություն առնելով ու Երկինք՝ Իր Հոր մոտ գնալով, ապացուցեց, որ Ինքն է հարությունն ու կյանքը: Նա եկավ, որպեսզի մեր երկրավոր ու երկնավոր կյանքին նպատակ հաղորդի:

«**ՈՎ ՀԱՎԱՏՈՒՄ Է ԻՆՁ**». գուցե հարցնեք, թե ինչպես կարող եք ունենալ հավիտենական կյանքը: Շատերը հավատում են, թե կարող են բարի գործերի միջոցով ունենալ այն, սակայն սուրբգրային վերոհիշյալ հատվածը հստակ է. Հիսուսն ուզում է, որ բոլորս իմանանք՝ հավիտենական կյանքը հավատքով ենք ստանում, այսինքն՝ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ եղած հավատքով՝ իմանալով, որ Նա սկզբից Աստված էր, Աստծո Որդին էր, ով մարդկության փրկության համար եկավ աշխարհ, մահացավ, Իր թանկագին արյունը թափեց, որպեսզի մենք կարողանանք մաքրվել մեր մեղքերից:

«**ԹԵԵՎ ՄԵՌՆԻ, ՊԻՏԻ՛ ԱՊՐԻ**». սա խոստում է: Ֆիզիկապես կարող ես մահանալ, կարող ես այս աշխարհի համար մահացած լինել, բայց դեռ հավիտենականություն կա, որ ամեն Տեր Հիսուս Քրիստոսին հավատացողի բաժինն է, հավիտենականություն Երկնքում բոլոր նրանց համար, ովքեր ապաշխարեցին, «մահացան» իրենց մեղքերի համար և երկրի վրա ապրեցին Քրիստոսի համար:

**«ԵՎ ՈՎ ԱՊՐՈՒՄ Է ԵՎ ՀԱՎԱՏՈՒՄ Է ԻՆՁ, ԵՐԲԵՔ ՊԻՏԻ ՉՄԵՌՆԻ»**. այս հավիտենական կյանքը ձերը կլինի, երբ հավատաք: Այո՛, սատանան նույնպես հավատում է, բայց նա հավատալով փրկություն չունի: Աստվածաշունչը հստակ ասում է, որ չկա որևէ մեղք, որ Տեր Հիսուսը չկարողանա ներել: Ներումը շնորհ է, որ տրված է բոլոր նրանց, ովքեր ապաշխարությամբ ու հավատքով գալիս են Հիսուսին: Հիշո՞ւմ եք՝ խաչի վրայի ավազակն ինչ ասաց. Մենք իրավացի ենք պատժվում, քանի որ մեր կատարած գործերի հատուցումն ենք ստանում, իսկ այս մարդը ոչ մի վատ բան չի արել»: Եվ նա ասաց Հիսուսին. «Տե՛ր, հիշի՛ր ինձ, երբ գաս Քո թագավորությամբ»: Հիսուսն ասաց նրան. «Ճշմարի՛տ եմ ասում քեզ, այսօր Ինձ հետ դրախտում կլինես»:

**«ԴՈՒ ՀԱՎԱՏՈ՞ՒՄ ԵՍ ՍՐԱՆ»**. Հիսուսն ավարտում է Իր խոսքերը հետևյալ հարցով. «Դու հավատո՞ւմ ես». մի հարց, որին մի օր բոլորս ստիպված ենք լինելու պատասխանել: Մեր տված պատասխանով է պայմանավորված լինելու մեր ամբողջ հավիտենականությունը: Հավատո՞ւմ եք, որ Հիսուսն Աստծո Որդին է, և որ փրկությունը միայն Նրա միջոցով է: Այժմ թերևս հարցնեք, թե ի՞նչ պետք է անեք Երկրնքի արքայությունը ժառանգելու համար: Աղոթքով եկե՛ք Հիսուսի մոտ, ապաշխարե՛ք և Նրանից ներում խնդրեք, խնդրե՛ք, որ Նա օգնի ձեզ՝ փոխելու ձեր ճանապարհները, և նոր կյանքով սկսե՛ք ապրել Նրա հետ:

Թո՛ղ այս Զատիկը հատուկ օր լինի ձեզ համար, այն օրը, երբ եկաք Հիսուսին, այն օրը, երբ ապահովեցիք ձեր հավիտենականությունը Հիսուսի մեջ:

Օրհնյալ Զատիկ եմ մաղթում ձեզ:

Հ. Գ.

---

«Նա հիմար չէ, ով տալիս է այն, ինչը չի կարող պահել,
որպեսզի ձեռք բերի այն, ինչը նա չի կարող կորցնել»:

Ջիմ Էլիոթ (1927-1956թթ.)

# Շրջանավարտ

Շատ երիտասարդներ մայիսից հունիս ժամանակամիջոցում շրջանավարտ են դառնալու: Որդիս ընդամենը մեկ շաբաթ առաջ շրջանավարտ դարձավ, և իրականում ձեզանից շատերը, ովքեր կարդում են այս տողերը, ավարտելու են կամ ճանաչում են նրանց, ովքեր ավարտելու են իրենց ուսումը հաջորդ ամիսների ընթացքում: Սա ուրախանալու ժամանակ է և ուրախանալու իսկական լավ պատճառ: Ի վերջո, սա մեծ հաջողություն է:

Կարծում եմ՝ այս հաջողությունը վերջինը չի լինելու, այլ առաջինը այն բազմաթիվ հաջողություններից, որ լինելու են բոլոր շրջանավարտների կյանքում: Ինչպես ջանասիրություն և վճռականություն էր պահանջվում ու ակնկալվում շրջանավարտ դառնալու համար, նույնպես նույն եռանդն ու աշխատանքը պահանջվում է հետագա բոլոր հաջողություններին հասնելու համար: Հավատում եմ, որ այս ընթացքում շրջանավարտ դարձողները շարունակելու են իրենց լավագույնը անել ու աշխատել այլ հաղթանակներ ունենալու համար: Աստվածաշունչն ասում է. «Ձեռքդ ինչ որ գտնի անելու, արա քո ամբողջ ուժով» (Ժող. 9:10): Հետևաբար, ճիշտ է ամեն ուժով և ջանասիրաբար աշխատել ապագայի ձեր փափագած աշխատանքին նախապատրաստվելու համար: Սակայն թո՛ւյլ տվեք հիշեցնել ձեզ, որ իրական հաջողությունը Տիրոջից է, Աստծուց է գալիս: Իրական և մնայուն հաջողություն կունենանք միայն այն ժամանակ, երբ Աստծո հետ քայլենք: Աստվածաշունչն ասում է. «Քանի որ՝ ի՞նչ օգուտ մարդուն, եթե ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորցնի» (Մատթ. 16:26): Սա չի նշանակում, թե սխալ է երազներ ու նպատակներ ունենալը ու դրանց հետևից գնալը, կամ կյանքում հաջողություն ու ձեռքբերումներ ունենալը: Ընդհակառակը, սա նշանակում է այդ բոլորի մեջ ամենակարևորը Աստծո և Նրա համար ապրելը չմոռանալն է:

Հետևաբար, սիրելի՛ շրջանավարտներ, շնորհավորում ենք ձեզ: Թող Աստված օգնի ձեզ՝ ավելի շատ հաջողությունների հասնելու, սակայն հիշե՛ք, որ իսկական հաղթանակն ու հաջողությունը Աստծո ճանապարհներով քայլելու մեջ է:

# Աստծուց առաջ անցնել

*Կարդացե՛ք Ծննդոց 16-րդ գլուխը*

Աստված Աբրամին բազմիցս հաղորդեց իր սերնդի մասին: Ծնն. 12:2-ում Նա խոստացավ Աբրամին մեծ ազգ դարձնել: Երբ Աբրամը Սյուքեմ հասավ (12:7), Աստված ասաց նրան, որ այդ երկիրը նրա սերնդին է տալու: Այս խոստումը կրկնվում է 13:15-ում և 15:5-ում: Սակայն Աբրամը տարիքն առնում էր. նա իր ութսունն անց էր և տակավին որդի չուներ: Ի՞նչ էր պատահել: Արդյոք Աստված մոռացե՞լ էր Իր խոստումը:

Հավանաբար հենց այդ ընթացքում Սառան ձեռնամուխ եղավ և իրենց առջև ծառացած խնդրի համար լուծում առաջարկեց: Սառան եգիպտացի աղախին ուներ՝ Հագարը, որին հավանաբար գնել էին, երբ պանդուխտ էին Եգիպտոսում: Եգիպտոս գնալու հետևանքները շարունակվում էին և ամենայն հավանականությամբ, լուրջ դժվարությունների պատճառ դառնում: Սառան առաջարկել էր, որ Աբրահամը Հագարին վերցնի որպես երկրորդ կին, որպեսզի իր աղախնի միջոցով կարողանար զավակներ ունենալ: Այդ ժամանակի սովորության համաձայն՝ աղջիկ ծառաները համարվում էին տիրուհու սեփականությունը: Սակայն ժամանակի սովորությունները միշտ չէ, որ համընկնում են Աստծո ուղիների հետ:

Այդ պահին Աբրահամի և Սառայի հավատքը ուժեղ չէր: Ըստ էության՝ նրանք ձախողվեցին: Աբրահամն արեց այնպես, ինչպես Սառան էր առաջարկել. Հագարին որպես կին առավ և շատ չանցած՝ Հագարը հղիացավ: Այդ ժամանակ Սառայի ծրագիրը հակառակ ազդեցություն ունեցավ: Թվում է՝ Հագարն ինքնիրեն չհամարեց իր տիրուհու համար պարզապես զավակ պարգևող կին: Նա սկսեց անարգել Սառային, քանի որ ինքը հաջողակ էր, իսկ իր տիրուհին՝ ոչ: Տան մեջ լարվածություն ծագեց: Հավատքի դաշտից դուրս գալը և Աստծուց լիովին կախված լինելու վիճակից դուրս գալն աղետալի արդյունքների է հանգեցնում:

Հետաքրքիր է, թե Սառան ինչ նկատի ուներ, երբ ասաց. «Իմ անիրավությունը թող քո վրա՛ լինի»: Աստվածաշնչի թարգմանություններից մեկում այսպես ենք կարդում. «Դու ես պատասխանատու ինձ հասցված վիրավորանքի համար»: Իր դեմ եղած անիրավության մասին խոսելով՝ Սառան հավանաբար նկատի ուներ Հագարի կողմից ցուցաբերված արհամարհանքը: Ինչևիցե, հուզական և անպատասխանատու արձագանքի մեղադրանքն ուրիշի վրա թողնելը ճիշտ չէր: Սխալը Աբրահամին վերագրելով՝ նա մեղքի ամբողջ պատասխանատվությունը նրա վրա դրեց, թեև խոստովանեց, թե ինքն էր աղախնին Աբրահամին կնության տվողը: Հետաքրքիր է, թե Սառան ի՞նչ նկատի ուներ «Տերը թող իմ ու քո միջև դատաստան անի» ասելով: Ի՞նչ իմաստով էր նա ուզում, որ Աստված դատեր Աբրահամին:

Աբրահամն էլ պատասխանատվությունն ուրիշի վրա դրեց: Սառային «Ահա քո աղախինը քո ձեռքում է, արա՛ նրան ինչ ուզում ես» ասելով՝ նա պարզապես փորձեց խուսափել սեփական պատասխանատվությունից, որպեսզի Սառան դառնար որոշման ամբողջ պատասխանատուն: Երբ Սառան գործելու ազատություն ստացավ, կոպտորեն վարվեց Հագարի հետ, և նա ստիպված այնտեղից փախավ:

Բայց խնդիրը պետք չէր այդքան հեշտ լուծել: Տիրոջ հրեշտակն անապատում՝ ջրհորի մոտ, գտավ Հագարին ու հարցրեց նրան, թե որտեղից է գալիս և ուր է գնում: Նա պատասխանեց, որ փախչում է տիրուհու երեսից: Տիրոջ հրեշտակը հանձնարարեց Հագարին վերադառնալ Սառայի մոտ ու հնազանդվել նրան: Ժամանակի ընթացքում ծնվեց իր որդին՝ Իսմայելը, ու մեծացավ որպես վայրի մարդ, ինչպես հրեշտակն ասել էր Հագարին:

Այս ամենից ի՞նչ պետք է սովորենք: Մի քանի կարևոր դասեր կան, որ պետք է հաշվի առնենք:

- Աստված հաճախ թույլ է տալիս, որ սպասենք մեր կարիքների պատասխանին կամ մեզ տված Իր խոստումների կատարմանը: Եթե Աստված սպասելու դիրքում է պահում մեզ, ուրեմն պետք չէ առաջ անցնենք և ուժ գործադրենք Աստծո ձեռքի վրա՝ փորձելով մեր նպատակներն իրականացնել սեփական ջանքերով: Մենք պետք է սպասենք Աստծո ժամանակին, որ-

պեսզի Նա կատարի Իր գործը: Աստծուց առաջ անցնելը երբեք իմաստուն քայլ չէ: Սակայն ավելի մեծ խնդիր է, երբ մարդիկ պատրաստ չեն գործելու Աստծո ուզած ժամանակին: Երբեմն էլ ավելի շուտ են լծվում գործի, քան Աստծո ժամանակն է: Երբ Մովսեսը 40 տարեկան էր, նա պատրաստ էր ազատելու իր ժողովրդին Եգիպտոսի ծանր լծից, բայց Աստծո՝ Իր ժողովրդին ազատելու ծրագրի իրագործմանը դեռ 40 տարի կար:

- Մովսեսը միակը չէ, որի շուտափույթ գործողություններն աղետալի հետևանքներ ունեցան: Սամուել մարգարեն Սավուղ թագավորին ասաց, որ 7 օր սպասի նախքան փղշտացիների հետ պատերազմելը. Սամուելը պետք է գար և զոհաբերություն կատարեր նախքան իսրայելացիների՝ փղշտացիների հետ պատերազմը սկսելը: Սամուելի գալու օրը Սավուղի համբերությունը սպառվեց, ուստի անձամբ ողջակեզ մատուցեց: Սավուղին ասվեց, որ իր մեղքի և անհամբերության պատճառով իր թագավորությունը հաստատուն չի մնալու: Ի վերջո նա կորցրեց թագավորությունը, և Դավիթը թագավոր դարձավ: Կարդացե՛ք Ա Թագ. 13:8-14-ը:

- Մենք պետք է գիտակցենք, որ մեր արածների համար ուրիշներին մեղադրելը մարդկային, բայց ոչ լավ հատկանիշ է: Այս երևույթին ծանոթ ենք նույնիսկ արարչագործության օրերից: Եդեմի պարտեզում Ադամը մեղադրեց կնոջը, որին Աստված տվել էր իրեն: Ադամը կարծես թե մեղադրեց Աստծուն՝ իրեն կին տալու համար: Իսկ Եվան մեղադրեց օձին: Բայց սա չի նվազեցնում սեփական գործողությունների համար մեր պատասխանատվության կշիռը: Մենք պետք է ընդունենք, որ պատասխանատու ենք սեփական քայլերի համար: Աստված գիտի, թե ով է սխալը, և մեղավորն անպայման ստանալու է Նրա դատաստանը:

- Առանց Աստծո կամքը փնտրելու գործի անցնելը նույնպես աղետալի է. մտածե՛ք Հեսուի ու Գայիի պատմության մասին: Հեսուն ենթադրեց՝ քանի որ Գային շատ ավելի փոքր քաղաք էր, քան Երիքովը, ապա ճակատամարտի հաղթանակն ապահով-

ված էր: Նա չփնտրեց Տիրոջ կամքը. եթե այդպես աներ, ավելի շուտ կիմանար, որ մեղք էր գործվել, որը պետք էր հեռացնել նախքան Աստծո օրհնությունը փորձառելը:

- Այս ճշմարտության հետ կապված է մեկ այլ կարևոր ճշմարտություն. իմաստուն քայլ չէ Աստծո՝ մեր աղոթքներին պատասխանելու կերպերը կազմակերպելը: Սա Նեեմանի խնդիրն էր, երբ գնաց Եղիսեին տեսնելու: Նա ակնկալում էր, որ Եղիսեն որոշակի կերպով գործեր, և երբ այդպես չեղավ, Նեեմանը խիստ նեղվեց: Նա պետք է սովորեր հնազանդվել մարգարեի հրահանգներին, եթե ուզում էր, որ իր խնդրանքը պատասխանվեր:
- Հաճախ ստիպված ենք լինում ապրել մեր սխալներով. մենք չենք կարող փախչել դրանցից կամ մակերեսորեն վարվել դրանց հետ: Մովսեսը իսրայելացիներին ջուր տալու համար նրանցից դառնացած՝ ժայռին հարվածեց, երբ Աստված ասել էր, որ խոսեր ժայռին: Իր մեղքի համար Մովսեսին արգելվեց մտնել այն երկիրը, որ Աստված խոստացել էր տալ Իր ժողովրդին:
- Հավատքով չապրելու հետևանքները հեշտությամբ չեն ջընջվում: Հաջորդ 15-16 տարիներին Աբրահամը և Սառան ստիպված էին ապրել իրենց անհամբերության սխալով: Մինչև Իսահակը չծնվեց, Աստված չպատվիրեց Աբրահամին ճանապարհել Հագարին: Իսկ Իսահակի և Իսմայելի սերունդների միջև պայքարը շարունակվում է մինչև այսօր:

Երբեք իմաստուն քայլ չէ Աստծուց առաջ անցնելը և մեր ուժերով Նրա կամքը կատարելը: Մենք պետք է Նրա գործն անենք Իր ուզած ձևով և Իր ուզած ժամանակին: Սա շատ արդիական և կարևոր նշանակություն ունեցող ուղերձ է, հատկապես երբ շատերը մտածում են, թե Ավետարանի տարածման համար նորացված տարբերակներ են անհրաժեշտ: Եկե՛ք որոշենք, որ Տիրոջ գործը կատարելու ենք Իր ուզած ձևով:

Դոն Սթորմը

# Արդյոք կարելի՞ է...

Անցած գիշեր քրիստոնեական ռադիոկայանով հաղորդում ունկընդրեցի: Ռադիոլսողներից մեկը զանգահարել էր ու այնպիսի հարց էր տվել, որը շատերիս համար հետաքրքրության առարկա է այսօր. ես այդ հարցին հետևյալ վերնագիրը կտամ. «Արդյոք կարելի՞ է...»: Ձեզ ծանոթ է այն ձևակերպումը, որ հաճախ լսում ենք քրիստոնեական շրջանակներում, օրինակ՝ արդյոք կարելի՞ է կիրակի օրը մարմնամարզությամբ զբաղվել, վիճակախաղի տոմս գնել: Արդյոք կարելի՞ է...: Ձեր մտքով ինչ անցնի, կարող եք այդ ազատ տեղը գրել: Հաղորդման ժամանակ տրված հարցը հետևյալն էր. «Արդյոք կարելի՞ է մարմնի վրա կտրվածքներ (փիրսինգ) անել»: Հստակ էր՝ զանգահարողը նկատի ուներ Ղևտացիների 19:28-ը. «Ձեր մարմնի վրա կտրումներ չանեք»: Կարծում եմ՝ դա իսկապես քանանացիների հեթանոսական սովորույթ էր: Այնուհետև մեկ այլ ունկընդիր զանգահարեց և մեջբերեց Եզեկիել 16:12-ը, որտեղ գրված է, թե ինչպես Աստված Իր սերը ցույց տվեց Երուսաղեմի ժողովրդին. « Ճակատիդ՝ ոսկեղեն, ականջներիդ՝ օղեր, գլխիդ գեղեցիկ պսակ դրեցի»: Ըստ այս ռադիոլսողի՝ այս համարը պնդում է, թե Աստված հավանություն է տվել մարմնի վրա կտրվածքներ անելուն: Ես չգիտեմ, թե քննարկումն ինչպես ավարտվեց, քանի որ ուշադրությունս ուրիշ բան գրավեց:

Այնուամենայնիվ, այս դեպքը ստիպեց ինձ մտածել, թե ինչպես ենք մենք՝ քրիստոնյաներս, վարվում կյանքի «մոխրագույն» հարցերի հետ: Ես այս հարցերին մոխրագույն անվանեցի, քանի որ ենթակա են քննարկման: Որոշ հարցեր սև կամ սպիտակ են: Մենք կարիք չունենք քննարկելու, թե արդյոք կարելի՞ է պոռնկություն անել կամ կարելի՞ է դրացուն սեր ցուցաբերել: Սակայն այն ոլորտները, որտեղ չկան հստակ պատասխաններ, շատ բանավեճերի առիթ են դառնում և հաճախ, ցավոք սրտի, բավական կոշտ քննադատության են արժանանում մեր մտածելակերպից տարբեր մտածելակերպ ունեցողները:

Մարմնի փիրսինգի այս քննարկումն օգնեց՝ ուշադրություն դարձնելու մեկ այլ հարցի ևս, թե որքան հաճախ ենք մենք՝ քրիստոնյաներս կենտրոնանում մեր գործերի վրա: Լավ է մեր արարքների մասին մտածելը, սակայն երբեմն մեր վարքագծի մասին մտահոգությունը մակերեսային է ու արհեստական: Եվ ավելի վատը կա. կարծում ենք, թե Աստված մեզ նման է՝ կենտրոնացած է միայն վարքագծի վրա: Աստված ավելի խորն է նայում, և մենք նույնպես նույնը պետք է անենք: Աստվածաշունչը կարդալով՝ հանդիպում ենք կրկնվող մի նյութի. լավ և վատ գործողությունները մեկուսացված իրադարձություններ չեն: Դրանք մարդու ներսում գտնվող խորը խորհուրդների պտուղն են. «Մարդն աչքին երևացածին է նայում, իսկ ՏԵՐԸ՝ սրտին» (Ա Թագ. 16:7):

Գուցե ժամանակն է, որ ավելի նմանվենք մեր Երկնավոր Հորը և սկսենք նայել մեր սրտի ներսը:

Երբ ինչ-որ մեկը ձեզ տալիս է «Արդյոք կարելի՞ է...» հարցերից մեկը, լավ է այսպես մտածել. «Ի՞նչ է կատարվում այս մարդու կյանքում: Ի՞նչ ներքին կարիք ունի նա, որ հավատում է, թե վիճակախաղի տոմսերը, մարմնի փիրսինգը կամ որևէ այլ բան կարող են իրեն բավարարել»: Այս հարցերի պատասխանը հաճախ սիրված զգալու կամ ինչ-որ մեկի համար յուրահատուկ լինելու չբավարարված զգացումն է, որը բավարարվում է, երբ անձը գիտակցում է, թե ով է ինքը Քրիստոսի մեջ: Այսինքն՝ «Արդյոք կարելի՞ է...» հարցը, իրականում, բուն հարցը չէ: Գուցե նման հարց գոյություն ունի, քանի որ անպատասխան մնացած ավելի խորը մի հարց կա: Պարզապես այս կամ այն արարքը կարելի է անելը կամ չանելը չի լուծում խնդրի էությունը: Թերևս նման հարցն արտացոլում է մարդու սրտի իրական վիճակը: Փորձառու քրիստոնյաները պետք է բավական հասուն լինեն, որպեսզի հասկանան և օգնեն այդպիսի խնդիրներով տառապողներին՝ նրանց մակերեսային պատասխան տալու կամ նրանց արարքը բուռն քննարկումների առարկա դարձնելու փոխարեն:

Հեշտ ու միևնույն ժամանակ վնասակար է քրիստոնեական կյանքը կարելիների ու չի կարելիների միջև դասավորելը: Այն, ինչ հաճախ անում ենք, մակերեսային օրինապաշտություն է Քրիստոսին ավելի

մոտենալու փոխարեն: Երբ մտածենք, թե ով ենք Քրիստոսով և որքան ենք վայելում Աստծուն, ապա կսկսենք փոքր հարցերին տարբեր կերպով նայել: Այդ մանր հարցերն իրականում չպետք է խորը կերպով անհանգստացնեն մեզ:

Ռեքս Տիրլավ

## Այցելուն

Մի օր մի մարդ եկեղեցի գնաց: Ժամանակից շուտ հասավ, ավտոմեքենան կայանեց և դուրս եկավ: Ուրիշ ավտոմեքենա ևս եկավ, և վարորդը իջնելով այցելուին ասաց. «Ես մի՛շտ այստեղ եմ կայանում իմ ավտոմեքենան. դո՛ւ իմ տեղն ես զբաղեցրել»:

Այցելուն Կիրակնօրյա դասարան մտավ, ազատ աթոռ գտավ և նստեց: Եկեղեցուց մի երիտասարդ օրիորդ եկավ և նրան ասաց. «Սա իմ աթոռն է: Դու իմ տեղն ես զբաղեցրել»: Այցելուն մի քիչ տխրեց՝ այդ կոշտ արտահայտությունը լսելով, բայց լուռ մնաց:

Կիրակնօրյայից հետո նա եկեղեցի մտավ՝ հաղորդության սեղանին մասնակցելու, և նստեց մի նստարանի վրա: Այս անգամ ուրիշը մոտեցավ իրեն և ասաց. «Ես մի՛շտ այստեղ եմ նստում, դու իմ տեղն ես զբաղեցրել»: Այցելուն ավելի նեղվեց այս վերաբերմունքից, բայց ոչինչ չասաց:

Քիչ հետո, մինչ եկեղեցու ժողովուրդն աղոթում էր Քրիստոսին, որ իրենց մեջ բնակվի, այցելուն ոտքի կանգնեց, և նրա կերպարանքը սկսեց փոխվել: Ահռելի վերքեր ի հայտ եկան ձեռքերի և ոտքերի վրա: Ներկաներից մեկը, նկատելով պատահածը, բարձրաձայն ասաց. «Ի՞նչ եղավ քեզ»: Մինչ գլխարկը փշե պսակի վերածվեց, և արցունքի կաթիլ ընկավ աչքից, այցելուն պատասխանեց. «Ես քո տե՛ղը զբաղեցրի»:

Արժե՛ լրջորեն մտածել, թե Ո՞վ զբաղեցրեց քո և իմ տեղը խաչափայտի վրա (Եսայի 53:5):

Քաղված՝ «Օրհնաբեր նռնենին» գրքից

# Եկեղեցու պատմությունը (5)

## Մ.թ. 1517-2000թթ.

### 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախորդ սերտողություններում անդրադարձանք Ջոն Ուիքլիֆին և Ջոն Հուսին՝ որպես 14-րդ դարի գլխավոր բարեփոխիչներից երկուսի: Ուիքլիֆը սուրբգրային հատվածներից սովորեց, թե Քրիստոսն է եկեղեցու գլուխը, այլ ոչ թե Պապը, և նա դատապարտեց կաթոլիկ եկեղեցու մի շարք վարդապետություններ՝ գոյափոխությունը, քավարանը, ուխտագնացությունը և ներողագիրը: Հուսը պնդեց, որ բոլոր ընտրյալները Քրիստոսի եկեղեցու անդամներ են, և հակառակվեց սիմոնականությանը (շնորհավաճառությանը), ներողագրին և Տերունական ընթրիքի չարաշահումներին (հռոմեական կաթոլիկ եկեղեցու հաղորդությանը կամ Տերունական ընթրիքին): Այս մարդիկ, ինչպես նաև ուրիշներ, հրապարակավ հայտարարեցին, որ Անգլիայում և Եվրոպայում մեծ անհրաժեշտություն կա աստվածաշնչակենտրոն քրիստոնեական վարդապետություններն ու սովորությունները վերականգնելու:

### 2. ՌԵՖՈՐՄԱՑԻԱ (1517-1648թթ.)

Մարտին Լյութերը (1483-1546թթ.) բացառիկ փայլուն երեխա էր, և իր հոր ծանր աշխատանքի շնորհիվ նրան բախտ վիճակվեց սովորել Գերմանիայի Էրֆուրտի համալսարանում: Այնուհետև նա դիմեց վանականության՝ հուսալով, որ իր հոգին խաղաղություն կգտնի: Կարճ ժամանակ անց նա հրավիրվեց՝ միանալու Սաքսոնիայի Ուիթնբերգի համալսարանի աշխատակազմին: Այդ ժամանակ Սաքսոնիան Գերմանիայի ամենահզոր նահանգն էր: Նա ուսումնասիրեց Աստվածաշնչի աստվածաբանությունը և 1512թ.-ին դարձավ աստվածաբանության պրոֆեսոր: 1513-1518թթ. ընթացքում դասավանդեց սաղմոսներից, Հռոմեացիներին, Գաղատացիներին, Եբրայեցիներին և Տիտոսին ուղղված նամակներից, և այդ ժամանակահատվածում հավատաց արդարացման վարդապետությանը (Հռոմ. 5:1): 1515թ.-ին Լյութերը նշանակվեց 11 վանքերի պատասխանատու, ինչպես նաև ծառայեց Ուիթնբերգի քաղաքային եկեղեցում:

Լյութերը շատ էր մտահոգվում, որ կաթոլիկ եկեղեցին խրախուսում էր մարդկանց եկեղեցուն գումար վճարել, որպեսզի իրենց մեղքերը ներվեն ու խուսափեն քավարանի պատժից: Նրանք կարող էին նաև վճարել իրենց մահացած հարազատների հոգու մաքրման համար, որպեսզի նրանց մեղքերը ներվեն ու չպատժվեն քավարանում: Մեղքի համար պատժից ազատվելու նման դրսևորումը կոչվեց ներողագիր: Իհարկե, միայն Աստված կարող է ներել մեղքերը (Մարկ. 2:5-10):

Եկեղեցու այս և այլ չար գործերի մասին բանավեճ հրահրելու համար Լյութերը որոշեց Ուիթնբերգի ամրոցի եկեղեցու դռան վրա մեխել 95 թեզիսները: Սա արեց 1517թ.-ի հոկտեմբերի 31-ին: Շատ արագ Լյութերի փաստաթղթի պատճեններ արվեցին ու տարածվեցին ամբողջ Եվրոպայով. այդ ժամանակ բարձր էր հոգևոր ճշմարտությունների հանդեպ հետաքրքրությունը: Լյութերը նաև շփում ուներ ազդեցիկ մարդկանց, այդ թվում Հռոմի Լեո X Պապի հետ: Լյութերը վերջնականապես արտաքսվեց կաթոլիկ եկեղեցուց և մահացավ 1546թ.-ին:

Լյութերի մահից հետո պատերազմ սկսվեց Հռոմի կաթոլիկների (սուրբ լիգայի անունով) և բողոքականների (Լյութերի հետևորդների) միջև: 1555թ.-ին Աուգսբուրգի կոնգրեսը կամ խորհրդարանը լուծեց կոնֆլիկտը՝ Հռոմեական սուրբ կայսրությունում լյութերականիզմը ճանաչելով որպես կրոնական օրինավոր ուղղություն, և միևնույն ժամանակ հաստատեց, որ Կաթոլիկ և Լյութերական եկեղեցիները պետք է տարածվեն կայսրության բոլոր մարզերում:

Ֆիլիպ Մելանխթոնը (1497-1560թթ.) հիմնականում դիտվում է որպես Լյութերական եկեղեցու, նախնական և միջնակարգ դպրոցների հիմնադիր ու հոգևորականների վերապատրաստման պատասխանատու: Նա մի շարք թեզիսներ և մեկնաբանություններ գրեց, մասնավորապես Նոր Կտակարանի վերաբերյալ մեկնաբանություններ և հավատքի հանգանակներ:

Ուստի վերասահմանվեցին աստվածաշնչյան շատ ճշմարտություններ՝ հավատքով արդարացումը, շնորհքով փրկությունը, բոլոր հավատացյալների քահանայությունը և այլն: Սակայն խաչը, մոմերը և

հռոմեական կաթոլիկության մյուս տարրերը պահպանվեցին, և եկեղեցին մնաց քաղաքացիական իշխանության հսկողության ներքո: Սակայն պետք է ընդունել, որ Ռեֆորմացիան քրիստոնեական մտածելակերպի և արարքների մեջ հսկա թռիչք առաջ բերեց:

Այնուամենայնիվ, Լյութերը մերժեց այն ճշմարտությունը, որ հրեաները հատուկ տեղ ունեն ապագայի հետ կապված աստվածային ծրագրում: Լյութերը սովորեցրեց, որ Եկեղեցին փոխարինեց հրեա ազգին, և որ հրեաները ապագա չունեն Աստծո նպատակների մեջ: Լյութերը խիստ վրդովեցրեց հրեաներին. մի բան, որ մենք չէինք համարձակվի անել, քանի որ չենք ուզում Աստծո անեծքը ուղղել մեզ վրա (Ծննդ. 12.2-3): Մենք գիտենք, որ Աստված երկրի վրա ընտրեց Իսրայել ազգը, որպես Իր հատուկ ժողովուրդ (Բ Օր. 7:7-8), բայց երբ նրանք մերժեցին Հիսուսին՝ որպես իրենց Մեսիայի, Աստված նրանց որոշ ժամանակով մի կողմ դրեց և սկսեց օրհնել հեթանոսներին (Գործք 28:28): Այս ժամանակաշրջանը շուտով կավարտվի, և Աստված կրկին կընդունի Իր հրեա ժողովրդին: Նախ՝ նրանք կանցնեն սարսափելի դժվարություններով, այնուհետև որպես երկրի վրա վերականգնված Իսրայել ազգ՝ կլինեն փառահեղ Հազարամյակի ժողովուրդների գլուխը կամ առաջնորդը: Սրանց մասին մանրամասն կխոսենք հաջորդ սերտողություններում:

Ինչպես Մ. Լյութերը Գերմանիայի Ուիթնբերգում Ռեֆորմացիան ներկայացրեց, այնպես էլ Ուլրիխ Ցվինգլին (1484-1531թթ.) այն ներկայացրեց Շվեյցարիայի Ցյուրիխում 1518թ.-ին, իսկ Մարտին Բուկերը (1491-1551թթ.)՝ Ստրասբուրգում (Գերմանիա) 1523թ.-ին: Հետագայում Ժան Կալվինը (1509-1564թթ.) իր ուսուցումները հիմնեց նախկին բարեփոխիչների աշխատանքի վրա:

Լյութերի նման Ցվինգլին նույնպես սովորեց համալսարաններում, այնուհետև 10 տարի ծառայեց որպես ծխական քահանա: 1516թ.-ին ծառայություն ստանձնեց Էյնզիդելնի վանական եկեղեցում, որտեղ սկսեց քարոզել Ավետարանը և խոսել կրոնական ուխտագնացությունների դեմ՝ որպես մեղքերի ներում ստանալու միջոցի ժխտման:

1519թ.-ին Ցյուրիխի տաճար տեղափոխվելուց հետո Ցվինգլին շատ համարձակ դարձավ, նույնիսկ ամուսնանալու աստիճան (դա ար-

գելված էր կաթոլիկ քահանաների համար): Այնուհետև քաղաքային խորհուրդը հանրային հանդիպում հրավիրեց՝ քննարկելու կրոնական հարցերը: Ցվինգլին այս հանդիպմանը ներկայացրեց 67 հոդված պարունակող մի փաստաթուղթ՝ համոզիչ կերպով ցույց տալով, որ ամբողջ փաստաթուղթը հիմնված է Աստվածաշնչի վրա: Խորհուրդը ընդունեց Ցվինգլիի ներկայացումը և ստանձնեց տաճարի վերահսկողությունը: 1525թ.-ին շատ քահանաներ ամուսնացան, և կաթոլիկ պատարագն ու իկոնաների պաշտամունքը վերացվեց: Այս արմատական փոփոխությունները տարածվեցին Շվեյցարիայի բոլոր գավառներում: Սակայն կաթոլիկները պատերազմ սկսեցին ընդդեմ Ցյուրիխի, և 1531թ.-ին Ցվինգլին մահացավ պատերազմում: Արդյունքում՝ որոշ գավառներ կաթոլիկ մնացին, իսկ մյուսներին, մասնավորապես Ժնևի գավառին թույլատրվեց երկուսի բաժանվել:

Կաթոլիկ եկեղեցու այս բաժանումը ժամանակի ընթացքում մի քանի բողոքական խմբերի առաջ գալու խթան հանդիսացավ, հատկապես 16-րդ դարի Անաբապտիստների, որոնք պնդեցին հավատացյալների մկրտությունը և պետությունից անկախ եկեղեցիների կազմավորումը: Որպես հալածանքի հետևանք՝ նրանք տարածվեցին մինչև Գերմանիա և Մորավիա:

Ժան Կալվինը (1509-1564թթ.) ծնվել է Նոյոնում՝ Փարիզից շուրջ 100 կմ հյուսիս-արևելքում: Նա բացառիկ փայլուն ուսանող էր: Երիտասարդ տարիքում Ժնևի միջով անցնելիս նա հանդիպեց հայտնի բարեփոխիչ Գիլլյոմ Ֆարելին, ով համոզեց նրան մնալ Ժնևում՝ օգնելու բարեփոխության շարժմանը: Մինչ Կալվինը Փարիզում էր, ակընհայտ է, որ Լյութերի գրությունները մեծ ազդեցություն էին թողել նրա վրա, և այժմ պատրաստ էր միանալու Ֆարելին Ժնևում: Այս մարդիկ փորձեցին քաղաքի բոլոր բնակիչներին բողոքականության հրավիրել, սակայն վեճեր սկսվեցին, և նրանք ստիպված եղան հեռանալ Ժնևից: Կալվինը գնաց Ստրասբուրգ, որտեղ բարեփոխիչ Մարտին Բուկերի ազդեցության տակ ընկավ: Այստեղ էր, որ Կալվինը գլխավորեց ֆրանսիացի փախստականների ժողովը և Նոր Կտակարանի շատ մեկնաբանություններ գրեց: Նա նաև մշակեց Ռեֆորմացիայի աստվածաբանության մասին իր փաստաթուղթը:

# Ո՞վ է այս Հիսուսը

*Մատթեոս 21*

Երբ Հիսուսը Երուսաղեմ էր մտնում, Իր աշակերտներն ավանակ բերեցին, ինչպես Նա պատվիրել էր նրանց: Նրանք իրենց հանդերձներն ավանակի վրա դրեցին, և Հիսուսը, դրա վրա նստած, քաղաք մտավ: Ժողովրդից շատերն իրենց հանդերձները փռեցին ճանապարհին, ոմանք էլ, ծառերից ճյուղեր կտրելով, ճանապարհի վրա դրեցին: Բաղարջակերաց տոնին (Զատկին) Երուսաղեմում եռուզեռ կար, և ժողովրդի մեջ շատ օտարականներ կային, որ Հիսուսին երբեք չէին տեսել: 10-րդ համարն ասում է, որ երբ Հիսուսը Երուսաղեմ մտավ, ամբողջ քաղաքը շարժվեց, ու ժողովրդի խանդավառ աղմուկը լսելով՝ շատերն ասացին. «Ո՞վ է սա»: Ժողովրդից էլ պատասխանեցին, թե Հիսուս մարգարեն է Գալիլիայի Նազարեթից:

Եթե այսօր նույնը պատահի քեզ, և ոչ հավատացյալ մարդու հանդիպես, ու նա հարցնի քեզ, թե ո՞վ է Հիսուսը, ի՞նչ կպատասխանես: Արդյոք ուրիշների՞ գաղափարը կհայտնես, Սուրբ Գրքի՞ ասածը կասես, թե՞ քո անձնական փորձառությունից կպատմես: Ուրիշների ասածը կամ գրածը կարող է ճիշտ կամ սխալ լինել, սակայն Աստծո Խոսքը ճշմարիտ է, և մենք փորձառաբար գիտենք ու ճանաչում ենք Հիսուս Քրիստոսին: Երբ ինչ-որ մեկի հետ հաղորդակցվես, փորձառաբար կճանաչես այդ անձին, հետևաբար նրա մասին ավելի լավ կարտահայտվես: Տեր Հիսուսն ուզում է, որ մենք կարողանանք վկայել Իր մասին:

Երբ Աստվածաշնչին նայենք, կտեսնենք, թե մարգարեները և առաքյալներն ինչեր են ասել Հիսուսի մասին: Ուզում եմ ձեր ուշադրությանը ներկայացնել Դանիել մարգարեին: Եթե Դանիելին հարցնենք. «Ո՞վ է Հիսուսը, որի մասին խոսեցիր ու նկարագրեցիր, երբ դեռ աշխարհ չէր եկել: Նրա մասին ի՞նչ կասես»: Դանիելը շատ բաներ կասի, սակայն ամենաազդեցիկը հետևյալը կարող է լինել. Նա Նաբուգոդոնոսոր թագավորի երազը մեկնողն է. «Դո՛ւ, ո՛վ թագավոր, տեսնում էիր, և ահա, մի մեծ արձան: Այդ մեծ արձանը, որի

պայծառությունը գերազանց էր, կանգնած էր քո առաջ. և դրա տեսքն ահավոր էր: Այս արձանի գլուխը մաքուր ոսկուց էր, կուրծքն ու բազուկներն՝ արծաթից, իսկ մեջքն ու ազդրերը՝ պղնձից: Սրունքները՝ երկաթից, նրա ոտները՝ մեկ մասը երկաթից, մեկ մասը կավից: Դու նայում էիր, մինչև առանց ձեռք դիպչելու մի քար կտրվեց ու հարվածեց արձանի ոտքերին, որոնք երկաթից ու կավից էին, ու դրանք փշրեց: Ապա երկաթը, կավը, պղինձը, արծաթը և ոսկին՝ բոլորը միասին փշրվեցին ու ամառվա կալի հարդափոշու պես եղան, ու քամին տարավ դրանք, ու նրանց համար ոչ մի տեղ չգտնվեց. բայց այն քարը, որ հարվածեց արձանին, մի մեծ լեռ դարձավ ու ամբողջ երկիրը լցրեց»: Եթե Դանիելին հարցնենք, թե ո՞վ է Հիսուսը, կասի. «Այն ուժն է, զորությունը, թագավորությունը, իշխանությունը, որ մարդու ձեռքով չէ: Նա քար է, որ մարդիկ չեն կոփել ու չեն տաշել. այդ քարը երկնային է, Աստծուց է գալիս և հարվածում ամբողջ երկրի իշխանություններին ու գերազանցում դրանց. Նա դրանց տեղը թագավորողն է»: Չկա երկրի վրա մի թագավորություն, իշխանություն, կառավարություն, զորություն, որ կարողանա Նրան խոչընդոտել: Սակայն ցավալին այն է, որ մեղավորն այսօր տակավին ոչ է ասում Աստծուն և Քրիստոսին, մերժում է, չի ենթարկվում Նրա իշխանությանը, զորությանը: Մեղավորն իր կամքն է ուզում գործադրել, իր ծրագրերն ունի, և կարծում է, թե իր պարագաների վրա իշխանություն ունի: Եթե կա մեկը, որ տակավին Քրիստոսի կամքին, իշխանությանը չի ենթարկվել, ապա օրը գալու է, երբ Նրա առջև ծնկի է իջնելու ու ենթարկվելու է. Նա թագավորելու է ու իշխելու է նրա վրա. այն ժամանակ անձը զղջալու է, բայց ուշ է լինելու:

Դանիել մարգարեից անցնենք որբևայրի կնոջը: Գյուղում որբևայրի մի կին իր միակ որդուն էր կորցրել: Մի խումբ ազգականներ տղային տանում էին թաղելու, երբ հանդիպեցին հակառակ ուղղությամբ եկող մի խմբի: Այդ խմբում կար Կենաց Իշխանը, Նա կանգնեցրեց այդ թափորը, դիպավ այդ դագաղին, ու երիտասարդը հարություն առավ: Նա մորը հանձնեց որդուն, և մայրը, տղային գրկախառնված, տուն գնաց: Եթե հարցնենք այս մորը, թե ո՞վ էր այդ Մարդը՝ Հիսուսը, ի՞նչ կպատասխանի մեզ: Նա կասի. «Նա իմ հուսահատության խորխորատում ինձ կյանք և հույս տվողն է, Նա իմ շփոթության մեջ

ինձ առաջնորդողն է, իմ ցավի ու վշտի մեջ ուրախություն ու երջանկություն տվողն է, ամենամեծ կորուստիս ժամանակ ինձ ամենամեծ գանձը տվողն է, իմ արցունքները սրբողն է, իմ կյանքի նշանակությունը փոխողն է: Ինձ համար կյանքն արժեք չուներ, ապրելն արժեք չուներ. ամուսնուս կորցրել էի, միակ տղայիս կորցրել էի: Ինչո՞ւ ապրեի, կյանքն ինձ ի՞նչ էր տալու: Եթե մինչև հիմա կյանքից համ չէի առել, սրանից հետո ի՞նչ համ էի առնելու: Սակայն Հիսուսը եկավ, կյանքիս համ, հույս, կյանքն ապրելու ախորժակ տվեց: Այլևս մեռնել չեմ ուզում, այլ ապրել, որովհետև տղաս ողջ է, որովհետև կորցրածս ինձ վերադարձրեց»:

Սիրելինե՛ր, մի՞թե մեր կյանքում էլ ժամանակներ չեն եղել, երբ չենք ուզել ապրել, ժպտալ, մարդկանց հետ խոսել չենք ուզել, ձանձրացել ենք կյանքից, մարդկանցից, կյանքի պարագաներից, շփոթվել ենք: Թերևս նույնիսկ ասել ենք՝ արժե՞ այս կյանքն ապրել: Բարեկա՛մ, կա Մեկը՝ Հիսուսը՝ Աստծո Որդին, որին կարող ես հանդիպել ու ճանաչել, կյանքիդ մեջ հրավիրել: Կարևոր չէ, թե քանի տարեկան ես, պարագաներդ ինչպիսին են, դժվարություններդ որքան շատ են, կյանքում որքան անիրավություն ես տեսել, ինչ ցավի, վշտի ու նեղության մեջ ես, կյանքից համ չես առնում. սրանք բոլորն արժեք չունեն: Երբ Հիսուսին հանդիպես, Նրա դեմքին, աչքերին նայես, թույլ տաս, որ քեզ դիպչի, քո վշտին, ցավին դիպչի, Նա կփոխի ամեն բան: Հիսուսը հիմնովին կփոխի կյանքդ, պարագաներդ, կյանքին նայող հայացքդ, մարդկանց ուղղված նայվածքդ՝ քեզ դարձնելով երջանիկ արարած: Ո՞վ է Նա: Նա Աստծուց եկածն է, Աստծո՝ անպատում պարգևն է մեզ, որպեսզի, կյանքի Տերն ու ղեկավարը լինելով՝ կյանք տա, ուրախացնի և Իրենով հավիտենական կյանք տա: Արդյոք դու կարո՞ղ ես այսպես վկայել Նրա մասին: Արդյոք կարո՞ղ ես ասել, որ Հիսուսը քո կյանքը փոխել է, քո կյանքի Թագավորն է: Եթե ո՛չ, ապա այսօր Նա ուզում է այդ առիթը շնորհել քեզ:

Վեր. Հապիպ Ալաճաճի

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

❊ ❊ ❊

# Անձնական հարաբերությունների աստվածաշնչյան կողմերը

## Միաստվածություն

Միաստվածությունը համակարգ է, որտեղ մարդիկ պաշտում են մեկ գերիշխան Աստծուն: Հին Կտակարանում առանցքային ուսմունքներից մեկն է Բ Օր. 6:4-ը. «Լսի՛ր, ով Իսրայել, մեր Տեր Աստվածը՝ մեկ Տեր է»: Բազմաստված հարևան ունեցող ազգերի կռապաշտության դեմ (բազմաստվածություն) Աստված Հին Կտակարանի ժամանակաշրջանում Իսրայելին հայտնեց Իր բնույթի այս էական կողմը: Տերը մեկ Աստված է: Հին Կտակարանի վկայությունը հիմնարար է Աստծո մեկության համար: Ամենօրյա աղոթքի մեջ հրեաները կրկնում էին Բ Օր. 6:4-ը՝ Շեման. «մեր Տեր Աստվածը՝ մեկ Տեր է»: Սրանով խոստովանում էին, որ Իսրայելի Աստվածը մրցակիցը չունեցող Արարիչն է:

## Երրորդությունը Նոր Կտակարանում

Նոր Կտակարանում Աստված այնուհետ հայտնեց, որ Նա Մեկ է Երեքի մեջ, և Նրա բուն Էությունը եռամեկ է: Աստված Հոր, Որդու և Սուրբ Հոգու հավիտենական Երրորդության ընտանիքն է՝ միաբան կամքի, նպատակի, սիրո, սրբության ու արդարության մեջ: Քրիստոնեությունը և՛ մենաստված է, և՛ Երրորդություն: Հոր և Որդու հարաբերությունը քաջ հայտնի է Ավետարաններում, քանզի Հիսուսը՝ հավիտենական Որդին, ով մարդկային մարմին է առնում, տեսանելի է մեզ, երբ պատասխան նոտան է խփում Հայր-Որդի հարաբերության միջոցով:

## Եռամեկ Ընտանիքը համագործակցում է

Հայր, Որդի և Սուրբ Հոգի միասնությունը պատկերված է Տեր Հիսուսի՝ Երրորդության մասին ուսմունքում (Հովհ. 14-16): Այս ճշմարտությունը բացատրվում է Տեր Հիսուսի ծառայության մեջ, ինչպես արձանագրված է բոլոր չորս Ավետարաններում, ինչպես նաև Նոր Կտակարանի մնացած մասերում: Եռամեկ Ընտանիքը համագոր-

ծակցում է որպես միասնություն՝ կորած մարդուն վերադարձնելու տուն՝ հավատացյալների փրկված ընտանիք:

## Անձնուրաց սեր

Եռամեկ Ընտանիքի Անձանց ամենացայտուն առանձնահատկությունը նրանց անձնուրաց սերն է մեկը մյուսի նկատմամբ: Յուրաքանչյուրը մյուսին հարգում է այնպես, որ Երրորդության նախօրինակ ընտանիքը դարձնում է մոդել հավատացյալների քրիստոնյա ընտանիքի համար: Հայրն ամեն իշխանություն Որդուն է տալիս և վկայում Նրա համար, ինչպես անում է Հիսուսն Իր համար (Հովհ. 8:18): Սակայն Որդին Իր անձի փառքի համար չի հավակնում: Նա ամեն փառք Հորն է տալիս, ով ուղարկել է Նրան (Հովհ. 12:49-50): Երրորդության խորհուրդը բացելու բանալին Եռամեկ Ընտանիքի Անձանց անմնացորդ սիրով իրար տրվելուն հետևելու մեջ է: Նրանք միշտ մեկը մյուսի հետ փոխկապակցված են:

## Եռամեկ Անձանց փոխադարձ սերը

Հայրը ծառայում է Որդուն, Որդին ծառայում է Հորը, Հայրը և Որդին ծառայում են Սուրբ Հոգուն, ով էլ իր հերթին ծառայում է Հորն ու Որդուն մեկության մեջ: Եռամեկ Անձերի փոխադարձ սերը հորդում է արարվածի վրա և երևում է կորածներին փրկելու նրանց շրջայլ համագործակցության մեջ (Հովհ. 14:15-17, 25-26):

## Նախօրինակը

Եռամեկ Ընտանիքն Աստծո ինքնահայտնությունն է՝ որպես իրականության մասին վերջնական ճշմարտություն: Այս ընտանիքը նախօրինակն է, որից Աստված ստեղծում է երկրային բոլոր ընտանիքներն իրենց միության ու բազմազանության մեջ: Մարդկության ընտանիքը, մեղանչելով աստվածային ընտանիքի հետ հարաբերությունը կորցնելուց հետո, Աստծո կողմից վերականգնվում է հաղորդակցվելու համար: Սա տեղի է ունենում, երբ դրա անդամներն ընդունում են Հորից բխող շնորհը՝ արտահայտված Որդով և վառված Սուրբ Հոգով:

Դոկտ. Չեսլով Բասսարա

# Այս անգամ էլ քեզ խնայեցի

*«Ահա գալիս ենք դեպի քեզ, որովհետև Դու ես մեր Աստվածը, ո՛վ ՏԵՐ» (Երեմ. 3:22)*

Չարլս Ուեյլիցտը՝ 60 տարեկան ծերունին, իր կյանքի մեծ մասը ծովի վրա էր անցկացրել: Նա անաստված ընտանիքում էր մեծացել և պատանեկության ընկերները սխալ ճամփաների էին առաջնորդել նրան:

Ձմռան մի գիշեր իր ձկնորսական նավը, որ ծովեզերքից շատ էր հեռացել, տարօրինակ փոթորիկի հանդիպեց: Քամին այնքա՜ն սաստիկ էր փչում և այնքա՜ն սարսափելի էին նավին հարվածող ալիքները, որ Ուեյլիցտը ամբողջ կյանքում առաջին անգամ իմացավ, թե ինչ է նշանակում վախենալ: Երբ ղեկի մոտ կանգնած ամեն ջանք գործադրում էր, որպեսզի նավի գլուխը քամու ուղղությամբ շրջի, մեծ ալիքը վրա էր հասնում, սաստկությամբ հարվածում նավին՝ նրան նետելով ծովի ջրերի մեջ:

Մեկ րոպե անց նա իր կյանքի համար մաքառում էր ծովում: Լողալ անկարելի էր, քանի որ ալիքները ծեծում էին նրան՝ փորձելով սպանել: Քիչ հետո զարմանալի հարվածով ալիքները նրան տարան մի տեղ, որտեղ նավից կախված պարան կար: Իր հուսահատական ջանքերով Ուեյլիցտը բռնեց պարանը և փաթաթվեց դրան՝ որպես իր կյանքի ազատման միակ միջոցին: Երբ բռնել էր պարանը, մեղմ ձայն լսեց, որ ասում էր. «Այս անգամ էլ քեզ խնայեցի»: Բառերն այնքան հստակ էին, որ շարունակ կրկնվում էին նրա մտքում: Երբ փոթորիկը վերջացավ, և նա նավահանգիստ հասավ, այս բառերը շարունակեցին հնչել իր ականջներում և սրտում. «Այս անգամ էլ քեզ խնայեցի»:

Ցամաքին հասնելուց հետո լսեց, որ երկու ձկնորսական նավակ խորտակվել է և դրանց նավաստիները կորել են ծովի ջրերում: Երբ տուն էր գնում, թվում էր, թե այդ ձայնն ավելի բարձր էր հնչում. «Այս անգամ էլ քեզ խնայեցի»:

Ընկերներից ոմանք գինետուն հրավիրեցին նրան, որպեսզի ազատման համար ուրախանան: Սակայն Ուեյլիցտը գինետուն չգնաց: Մի բան, որ չէր կարողանում նկարագրել, հոգևոր ժողովի առաջնորդեց իր քայլերը: Հենց այնտեղ՝ աղոթողների այդ սենյակում, ոտքի կանգնեց և իր ազատման զարմանալի պատմությունը պատմեց՝ կրկնելով այն բառերը, որոնք հնչում էին իր ականջին: Հետո հասկացավ, որ Աստված էր իրեն ազատողը, և Աստծո ձայնն էր, որ լսեց ծովի ջրերում:

Նրանք միատեղ աղոթեցին: Աստվածավախ այդ փոքրաթիվ խումբը և Չարլս Ուեյլիցտն այդ գիշեր հասկացավ Աստծո սերը և Տեր Հիսուս Քրիստոսի ձրի շնորհքը: Առաջին անգամ իմացավ, որ մեղավոր է, և զարմացավ, որ Աստված խնայել է իրեն, երբ ուրիշները վերցվել են աշխարհից:

Սիրելի՛ ընթերցող, Աստված քանի՞ անգամ է ստույգ մահից ազատել քեզ: Ի՞նչ վիճակում կլինեիր, եթե անցյալում մահացած լինեիր: Գիտե՞ս, որ Նա ուզում է՝ ապաշխարես, Իրեն դառնաս և փրկվես: Չե՞ս ուզում Նրան դառնալ այսօր:

Քաղված՝ «Ընտիր ժողովածու հոգևոր պատմությունների» գրքից

---

*«Ո՞վ հավատաց մեր լուրին, և ՏԻՐՈՋ բազուկն ո՞մ հայտնվեց: Քանի որ նա դալար ոստի և ծարավուտ գետնից բուսած արմատի պես պիտի աճի Նրա առաջ. ո՛չ տեսք ուներ, ո՛չ էլ վայելչություն, որ նրան նայեինք, գեղեցկություն չկար, որ նրան ցանկանայինք: Մարդկանցից նա անարգվեց ու մերժվեց, վշտի մարդ և ցավի տեղյակ. և այնպիսին, ումից պետք է երես դարձնեինք. անարգվեց, և մենք նրան չգնահատեցինք: Հիրավի, նա մեր ցավերը վերցրեց և մեր վշտերը իր վրա կրեց, իսկ մենք նրան վիրավորված, Աստծուց հարվածված ու պատուհասի հանդիպած համարեցինք: Սակայն մեր մեղքերի համար Նա վիրավորվեց և մեր անօրենությունների համար ճզմվեց, մեր խաղաղության պատիժը նրա վրա եկավ, և նրա վերքերով մենք բժշկվեցինք: Մենք բոլորս ոչխարների պես մոլորվեցինք, յուրաքանչյուրն իր ճանապարհին դարձավ. և ՏԵՐԸ նրա վրա դրեց մեր բոլորի մեղքը» (Եսայի 53:1-6):*

# Հարությունը հնարավոր չէ կանգնեցնել

Գերմանիայում մի գերեզման կա, որի վրա հսկայական մարմարե ու գրանիտե քարեր կողք կողքի են դրված և ամրացված են ծանր երկաթե ամրակներով: Այն պատկանում է մի կնոջ, որը չէր հավատում մեռելների հարությանը: Սակայն զարմանալիորեն նա իր կտակում փափագ էր հայտնել իր գերեզմանն այդքան ապահով կառուցել, որ եթե նույնիսկ հարություն տեղի ունենա, իրեն չհասնի: Նրա շիրմաքարին արձանագրված էր՝ «Այս գերեզմանը երբեք չպետք է բացվի»:

Ժամանակի ընթացքում քարերի տակ պահված մի հունդ սկսեց աճել: Կամաց-կամաց նա հողից դուրս եկավ: Երբ կոճղը հաստացավ, քարի մեծ կտորները շարժվեցին, և երկաթե ամրակները քանդվեցին: Փոքրիկ հունդը մեծ ծառ դարձավ և քարերը մի կողմ հրեց:

Հունդի կենդանի հուժկու զորությունը պարզ արտացոլում է աստվածային զորեղ Խոսքը, որի միջոցով մի օր կենդանանալու են բոլոր նրանք, ովքեր գերեզմաններում են: Նա նաև կենդանացնելու է բոլոր նրանց, ովքեր ընկղմվել են ծովերում, այրվել կամ այլ կերպով են մահացել: Սա իրագործելը դժվար չէ Նրան, ով ոչնչից միայն Խոսքով ստեղծեց ամբողջ տիեզերքը: Անհավատությունը չի կարող կանգնեցնել հարությունը: Սակայն հարուցյալ Քրիստոսի հանդեպ հավատքն օրհնության դռներ է բացում, և Նրա հարությունն ապահովում է փառավոր մարմին և երկնային տուն մեզ համար: Նոր մարմիններով վերստին միանալու ենք մեր հարուցյալ հարազատներին՝ Հիսուսի հետ հավիտյան ապրելու համար:

Պողոս առաքյալն ասում է. «Հուսալով Աստծուն, ինչպես իրենք էլ ընդունում են, թե մեռածների հարություն պիտի լինի՝ թե՛ արդարների, և թե՛ մեղավորների համար: Եվ հենց սրա համար եմ ջանում, որ մշտապես խիղճս մաքուր լինի Աստծո և մարդկանց առաջ» (Գործք 24:15-16):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

# Մարիամը՝ Հիսուսի հարության առաջին վկան

Չորս Ավետարաններն էլ արձանագրում են Հիսուսի հարության առավոտյան պատահած դեպքերը: Դրանք առանց բացառության հիշում են Մարիամ Մագդաղենացու անունը: Ըստ Հովհաննեսի Ավետարանի՝ երբ Մարիամը գերեզման է գալիս վաղ առավոտյան՝ դեռ չլուսացած, տեսնում է, որ գերեզմանի դռնից քարը գլորված է: Վազելով վերադառնում է ու պատմում Սիմոն Պետրոսին և Հովհաննեսին, որոնց Հիսուսը շատ էր սիրում, ասելով, թե Տիրոջը գերեզմանից վերցրել են: Պետրոսը և Հովհաննեսը վազելով գերեզման են գընում ու այն դատարկ գտնելով՝ վերադառնում են:

Սակայն Մարիամը երկրորդ անգամ գերեզման է գնում ու գերեզմանի դռան մոտ կանգնած՝ լացում է: Մարիամը լացում էր, քանի որ իր սիրած Տերը խաչվել էր, մահացել ու թաղվել: Նրա վիշտը մեծացել էր, քանի որ իր թաղված Տերը գերեզմանի մեջ չէր հիմա: Մարիամն անմխիթար լացում էր՝ սաստիկ ընկճված լինելով իր վշտի, վախի և հուսախաբության մեջ:

Զարմանալին այն էր, որ գլորված քարը, դատարկ գերեզմանը, երկու հրեշտակները, կտավները և ծալված վարշամակը Մարիամին չէին կարող մխիթարել: Սրանք բոլորը փաստեր էին, որ Հիսուս Քրիստոսը հարություն էր առել: Մարիամի արցունքները սրբողը ու նրա վիշտը, վախն ու հուսահատությունը վերցնողը Հիսուսի՝ հարություն առած լինելու փաստերը չէին, այլ հարուցյալ Քրիստոսն Ինքն էր:

Մեր հուսահատությունների, վիշտ ու ցավի մեջ Աստծո գոյությունն ու Հիսուսի հարություն առած լինելու փաստերը այսօր էլ մեզ չեն կարող օգնել, ոչ էլ մեր արցունքները կարող են սրբել: Միայն Հիսուսին անձնապես տեսնելը կարող է մեր պարագաները փոխել: Երբ Մարիամը տեսավ Հիսուսին, դադարեց լացելուց և ուզեց պաշտել Նրան: Արդյոք դու էլ քո վշտի և հուսահատության մեջ կարո՞ղ ես տեսնել Հիսուսին ու մխիթարվել:

Վեր. Հապիպ Ալաճաճի

Քաղված՝ «Հոգևոր խորհրդածությունների կաթիլներ» գրքից

# Աստծո զորությունը

«Որովհետև խաչի պատգամը կորածների համար հիմարություն է, բայց մեզ՝ փրկվածներիս համար Աստծո զորությունն է» (Ա Կորնթ. 1:18):

Քրիստոսի Անձն ու խաչի մահը չընդունող մարդու համար խաչն ու նրա պատգամը սոսկ անմտություն են: Բայց այդ «անմտությունը» հենց այն զորությունն է, որը փոխում է մարդկային կյանքերն ու երևույթները. «Խաչի պատգամը զորություն է»: Հունարենում «զորություն» բառի համարժեքը «dunamitis» (դինամիտ, պայթուցիկ) բառն է:

Խաչյալ Հիսուսը պարտված ու մոլորյալ առաջնորդ չէ, ճիշտ հակառակը՝ պատկերվում է մեղքի ու մահվան հանդեպ նրա տարած հաղթանակը, գերբնական զորության արձակումը՝ Սերը: Նրանք, ովքեր Հիսուսին ու Նրա մահն անմտություն էին համարում, հետագայում սկսեցին դողալ, երբ տաճարի վարագույրը վերևից ներքև պատռվեց:

«Եվ ահա տաճարի վարագույրը ճղվեց վերևից մինչև ցած, և երկիրը շարժվեց, և քարերը ճաքեցին, և գերեզմանները բացվեցին ու շատ սուրբ ննջեցյալների մարմիններ հարություն առան» (Մատթ. 27:51-52):

Սա ոչ միայն զորություն է, այլ նաև պայթյուն: Ուստի զարմանալի չէ, որ.

«Հարյուրապետը և նրանք, ովքեր որ նրա հետ Հիսուսին պահում էին, երբ որ երկրաշարժը և այն եղածները տեսան, շատ վախեցան և ասացին. «Ճշմարիտ, որ սա Աստծո Որդի էր» (Մատթ. 27:54):

Ո՞րն է խաչի պատգամը: Դա այն զորությունն է, որը պատռեց մարդուն Աստծուց զատող վարագույրը: Այդ զորությունը շարունակում է պատռել վարագույրներն ու փլել մեզ Աստծուց զատող պատերը: Այդ զորությունը ցնցեց երկիրը, շարժեց ժայռերը և շարունակում է շարժել ու փշրել մարդկանց քարացած սրտերը:

Այդ զորությունը բացեց գերեզմանները, ու շատերը հարություն առան, և այսօր էլ շարունակում է կենդանություն տալ հոգևորապես և հուզականորեն մեռած մարդկանց, երբ նրանք արձագանքում են խաչի պատգամին:

«Ուրեմն որովհետև Աստծո իմաստության մեջ Աստծո աշխարհը իմաստությունով չճանաչեց Աստծուն, Աստված հաճեց, որ քարոզության հիմարությունով ապրեցնի հավատացյալներին» (Ա Կորնթ. 1:21):

Այստեղ առանցքը հետևյալ արտահայտությունն է. «Նրանք, ովքեր հավատացին»: 22-րդ համարը մի տխուր պատկեր է ներկայացնում. «Եվ որովհետև հրեաները նշան են ուզում, և հույներն էլ իմաստություն են խնդրում»: Անհավատների համար խաչի պատգամը հիմարություն է, քանի դեռ չեն բացում իրենց սրտերն ու աչքերն այդ պատգամի զորության առջև: Շատերը կարծում են, թե այդ զորությունը պետք է իրենց մեջ դրսևորվի գերբնական նշաններով, հրաշքներով, այլապես նրանք չունեն Աստծո զորությունը:

Աստծո զորության մեծագույն հրաշքն այն է, որ դու վերստին ծնունդ ես առնում, քո հին, կոտրված կյանքն ամբողջությամբ նոր սկիզբ է ստանում, հուսահատությունը վերածվում է հույսի, մահը՝ կյանքի, Քառսը դառնում է կարգուկանոն, ներդաշնակություն ու գեղեցկություն: Այո՛, աշխարհը հրաշքներ, նշաններ է պահանջում, բայց խաչից ավելի զորավոր նշան չկա:

«Մենք էլ քարոզում ենք խաչյալ Քրիստոսի մասին, հրեաներին՝ գայթակղություն և հույներին՝ հիմարություն» (Ա Կորնթ. 1:22-23):

Վեր. Հովսեփ Հովսեփյան

---

**«Ինչ որ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն՝ նույնը դուք արեք նրանց, որովհետև այս է Օրենքը և Մարգարեները»:**

**Մատթեոս 7:12**

## «Ճամփա կա, որ մարդուն շիտակ է թվում, բայց դրա վերջում մահվան ճամփաներն են»: (Առակ. 14:12)

Այսօր մեզ համար սովորական է դարձել այն, որ դեռևս կրթություն և մասնագիտություն չստացած երիտասարդները լքում են հայրական տունը՝ ինքնուրույն ապրելու համար: Նրանք ձգտում են անկախության և ազատության, որպեսզի ամեն ինչ ինքնուրույն լուծելու հնարավորություն ունենան: Ծնողների քննադատությունը նրանց կողմից ընկալվում է որպես անվստահություն իրենց կյանքի հանդեպ: Նրանք ուզում են ազատ լինել ծնողական ազդեցությունից՝ սեփական ծրագրերն իրագործելու համար:

Անառակ որդին, որի մասին խոսվում է Ղուկ. 15-ում, այդպիսի զգացումներ ուներ և դրա համար գնաց հեռավոր երկիր: Նա կարծում էր, թե այնտեղ իսկապես կկարողանա ազատ ու անկախ լինել: Սակայն ի՞նչ է կատարվում այդպիսի երիտասարդների հետ, երբ այս աշխարհի իշխանը՝ սատանան, քաշում է նրանց իր ցանցի մեջ: Այն երիտասարդ տղայի հարստությունն աղքատության վերածվեց, իսկ ազատությունը՝ ստրկության: Այս աշխարհի կարճաժամկետ հաճույքների համար նա ստիպված եղավ թանկ վճարել:

Նրանց, ովքեր հայտնվել են նման իրավիճակում, Տերն ասում է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը. ոչ մեկը Հորը չի գա, բացի Ինձանով» (Հովհ. 14:6): Նա ուրախությամբ բնակարան կտա մեզ, որտեղ մտերիմ փոխհարաբերություն կունենանք մեր Հայր Աստծո հետ: Մենք կունենանք սեր և անվտանգություն: Նա, ով կընդունի Աստծո դատավճիռն իր ընկած վիճակի վերաբերյալ և կխոստովանի իր մեղքերը, կարող է հավատքով ընդունել այն, որ Քրիստոսը չարչարվեց և մահացավ խաչի վրա իր համար: Այդպիսի մարդը կդառնա Աստծո երջանիկ զավակը, և Աստված կլինի նրա Հայրը: